ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

01 ապրիլի 2020 թվականի N 118-Ա

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի <<Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին>> թիվ 298-Ն որոշմամբ

Որոշում եմ

1. ՀՀ Տավուշի մարզի տարածքում ապահովել նոր կորոնավիրուսային վարակի <<COVID-19>> կանխարգելման և անվտանգության բոլոր կանոնների և պահանջների իրականացումն ու կատարումը:
2. Ստեղծված անցակետերում սահմանել ինտենսիվ հսկողություն և տեղեկատվության փոխանցում:
3. Առևտրի կենտրոններում, դեղատներում, բանկերում, գազաբենզալցակայաններում, հիմնարկ-ձեռնարկություններում և այլ կազմակերպություններում խստորեն առաջնորդվել ՀՀ Պարետի ցուցումներով, ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով, ՀՀ Տավուշի մարզպետի որոշումներով:
4. Բանկերում, առևտրի կետերում և այլ վայրերում կանխել հերթերի և կուտակումների առաջացումը, ապահովել սոցիալական հեռավորության պահպանումը, թոշակների և աշխատավարձերի տրամադրումը կազմակերպել փոքր քանակներով անձանց և ընդմիջվող գրաֆիկով: Ակտիվորեն իրականացնել բանկոմատների և շփման տարածքների ախտահանում:
5. Մարզպետի որոշմամբ նշանակված պատասխանատուներն՝ իրականացնել ինտենսիվ մշտադիտարկում, ստուգայցեր և ձեռնարկել համապատասխան կանխարգելող և արգելող միջոցառումներ:
6. Լրատվության և հասարակության հետ կապերի բաժնին՝ ապահովել անհրաժեշտ տեղեկատվության տարածումը:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ՉՈԲԱՆՅԱՆ

X

Signed by: CHOBANYAN HAYK 1503730050